

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՌ Գ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻ

ԳԻՏԱԿԱՆ ՊՐՈՊՐԵԱՆԴԻԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ


Գրության
տաշխան կենացը,
այն գրության,
որը չը պարապում
ուղղվութիւն...
(իշլ Արալին)

Ա.Վ.ԵՏԻՔ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

ԴԱՐՎԻՆԸ ԵՎ ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ

ՀԱՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1947



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԾ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ.

ԳԻՏԱԿԱՆ ՊՐՈՊԵՐԱԼԴՐԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

575.4

✓

S - 37

ԱՎԵՏԻՔ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՄՈՒԴՎԱՐ Է 1961 թ.

Դ Ա Ր Վ Ի Ւ Ը Ը
ԵՐԱ ՌԻՍՄՈՒԻՆՔԸ

4964

15974



ՀՍԽԲ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՑՈՒՏԱՐԱԿԱԳՐԻ ՑՈՒ

ԵՐԵՎԱՆ

1947

Պատասխանառու խմբագիր՝
Հայկական ՍՍՌ Գիտուրյունների Ակադեմիայի խոկական անդամ,
Գիտական պրոպագանդայի խորհրդի նախագահ՝

Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պրակի խմբագիր՝ Հ. ԲՈՏԻԿՅԱՆ


ԱՎԵՏԻԿ ՏԵՐ-ՊՈՐՈՍՅԱՆ

ДАРВИН И ЕГО УЧЕНИЕ


(На армянском языке)

Изд. АН Арм. ССР. Ереван, 1947 г.

12345
12345



Զարդ Դավթին



John C. Frémont

Դ համբ կողմէունք նորագույն պարզ և նշանաւութեան ամ առջի
տակ ամ անուղղ ուղար գիտ ու ուսուցանակ կամաց և ճառ
վահան ու մասնաւու ուն և անուղագու պար պարագանեան
առաջանաւու առաջանաւու առաջանաւու առաջանաւու

1. Թարգինի զպրոցական տարիները. Անգլիական տիպիկ բորժուական ընտանիքի զավակ էր Թարգինը. Հայրը բժիշկ, պատն էլ բժիշկ: Ժամանակի անգլիական զպրոցը և մանավանդ այն դպրոցը, որտեղ սովորել է Թարգինը, գովասանիք կամ պարծանիք ոչինչ չի ունեցել. դասավանդումը խստորեն կլասիկական՝ հին լեզուներ, փոքր ինչ աշխարհագրություն և պատմություն— առանքա ամբողջ տվածը, բովանդակությունը. ուստի և զպրոցը որպես կրթիչ հիմնարկ՝ «բաց տեղ» է եղել Թարգինի համար: «Ավելի վատթար բան, քան դոկտոր Բուտլերի դպրոցը, ոչինչ չի կարող լինել իմ մարդի զարգացման համար» գրում է Թարգինն իր ինքնակենսագրականում: Նրա հետաքրքրությունը դպրոցից դուրս է եղել. զրուանք ու որս, շներ ու մկներ, հանքերի ու միջատների ծովովածուներ—առանքա նրա հետաքրքրության առարկաները: Վաղ հասակից խիստ ուժեղ է եղել նրա մեջ «հավաքածուներ կազմելու կիրքը, որ մարդուն դարձնում է սիստեմատիկ նատուրալիստ, սիրող կամ ժլատ»: Ո՞չ տաղանդ, ոչ էլ ախորժակ է ունեցել լեզուներ սովորելու, հետեւարար շատ սովորական, նույնիսկ միջակից ցած, աշակերտ է նկատվել թե դպրոցի և թե հոր կողմից: «Դու մտածում ես միայն որսի, շների ու մկներ բռնելու մասին, դու կիսայտառակես քեզ և մեր ամբողջ ընտանիքը»— նկատել է միանգամ Հայրը որդուն:

Բայց դպրոցական այդ տարիներին Դարվինի մեծ եղբոր տար-
վելը բնիմիայով բարերար ազդեցություն է անուած փոքր Զարլրգի

Վիա: Նա Հետաքրքրվում է եղբոր կատարած փորձերով, օգնում է նրան և թիմիայի վերաբերյալ մի քանի զրբեր կարդում: «Ես շատ Հետաքրքրվեցի այդ առարկայավ և մեր զբաղմունքները հաճախ տեսում էին մինչև ուշ զիշեր: Այդ զբաղմունքներն ամենախորը կրթիչ նշանակություն ունեցան այն բալորից ավելի, ինչ ես սովորեցի իմ դպրոցական տարիներին: Երանք զորձնականորեն ծանոթացրին ինձ էրսպերիմենտալ դիտության նշանակության հետ», զրում է Դարվինը: Եվ մինչ այս կապակցությամբ ընկերները Դարվինին «գաղ» մականունն են տվել, դպրոցի զեկավարը «մանկավարժ» զր. Բուտլերը հրապարակութիւն հանդիմաննել է նրան՝ այդպիսի անօգուտ ժամավաճառության համար: Էվլիլիդի երկրաշափությունն այդ շրջանում նա սպորել է կողմնակի ուսուցչի մոտ և մեծ բավկանություն ստացել երկրաշափական պայմանագրություններից: Գիտական զբաղմունքներից դուրս նա սիրել է նաև շատ կարգավորությունը և հաճուքը կարգացել է Բայրունի պուեմներն ու Վալտեր Սկոտի գրվածքները. իսկ առաջին անգամ բնության գեղեցկության հաճուքը զգացել ու ճաշակել է ձիով կատարած մի զբուանքի ժամանակ՝ Ուելսին սահմանակից վայրերում:

2. Դարվինն էդինբուրգում. Դարվինի դպրոցական տարիների ամբողջ վարքը խելացի հորը բերում է այն եղրակացության, որ այլիս միտք չունի նրան թունել զպրոցով, ուստի և 16 տարեկան Զարլըզին եղինբուրգի համալսարանն է ուղարկում՝ բժշկություն սովորելու:

Ուսումն այստեղ բացառապես դասախոսություններից բաղկացած՝ նրա համար «անտանելիութենական ծանծրալիք» է եղել: Նա կարդալը, ինքնուրույն ու սեփական աշխատանքն ավելի օգտակար է համարել, քան շոր ու ցամաք դասախոսություններ լսելը: Մարդու անտոմիայի դասախոսությունները նրա համար «նույնանձնանձրալի են եղել, որքան և ինքը դասախոսը»: Զանձրալի են եզզել նաև զողովրդայի և գեղուզգիայի դասախոսությունները, վերջինս մինչ այն աստիճան, որ նա վճռում է զեղուզգիայի գիրը բնավձեռքը շառնել և առհասարակ զգացվել այդ դիտությամբ: Հետագայում սակայն նա շատ անգամ է ցավացել ու ափսոսացել, որ իրեն չեն հարկադրել դիակի վրա աշխատելու սրանով նա կհաղ-



Lundmark

թահարեր իր զզվանքը, իսկ ձեռք բերած վարժությունն ու փորձառությունն ապագայում անդնահատելի ծառայություններ կժառացներ իրեն։ Սա նրա համար անուղղելի շարիք է եղել, ինչպես և մեծ շարիք՝ նկատել չկարողանալը։ Երկու անգամ ներկա է եղել շատ ծանր օպերացիաների, բայց չի կարողացել մինչև վերջը մնալ և դուրս է փախել։

Դեպի բժշկությունն այսպիսի վերաբերմունք ոնենալու գործում պակաս դեր չի խաղացել և այն զիտակցությունը, իսկ սա անհրաժեշտ է ընդգծել, որովհետև շատ է ուսանելի, թե նոր բողնելիք հարստորյամբ ինչն անկարու ապրուս է անհնալու։ այս վստահությունը բավական էր, գրում է Դարվինը, որ սառչեր իմ մեջ ամեն շանասիրություն՝ բժշկություն սովորելու։

Էղինքուրգյան իր այս շրջանում Դարվինն ավելի շատ զբաղվել է բնական գիտություններով, ընկերանալով կենդանաբան, բուսաբան և երկրաբան ուսանողների։ Նա հաճախ օգնել է այդ զողովություններին ծովային կենդանիների հավաքելու գործում, ինքն էլ ուսել է այդ կենդանիների անատոմիան, ինչպես և կազմել ոստրեների մի ժողովածու։ Նա նույնիսկ 1826 թ. Փլինիան ընկերության մեջ մի կարճ հաղորդում է արել իր կատարած մի հայտնագործման մասին Flustra-a-β* ձվերի վերաբերմամբ, ապացուցելով, որ մինչ այդ ձու համարված մարմիններն իրոք ձու չեն, այլ թարթիչներով շարժվող թթվուրներ։ Այդ ընկերության նիստերին հաճախելը օգտակար աղդեցություն է արել նրա վրա և դողել նրան գիտությամբ զբաղվելու։ Նա անդամ է եղել նաև Բրժըշկական արքայական ընկերության և հաճախել նրա նիստերին, սակայն ապարդյուն։

Նշանակալից է և արժանի հիշատակության, որ իր այդ զողովությունը ընկերներից մեկը, տարիքով իրենից մեծ, մի զբոսանքի ժամանակ ոգերությամբ պատմել է Լամարկի և նրա էվոլյուցիոնիստական հայացքների մասին և սակայն դրանք ո՛չ մի տպավորություն չեն թողել Դարվինի վրա։ Նա միայն լուս զարմացմամբ ունելիքներել է։ Ավելի վաղ նա կարդացած է եղել և իր պապ էրազ-

* Flustra-ն մամուակենդանիների (Bryozoa, Mшանք) դասին պատկանող ծովային, նստակյաց, զաղութներով ապօռղ մի կենդանիներին նման պոլիպներին։



Արքայի պատուակեր Փառ Հումբող

մուսի նման հայացքներ պարունակով «Զոհնոմիա» կոչվող գիրը
նույնպես առանց որևէ հետևանքի:

3. Դարվինը Քեմբրիջում. Դարվինի էլեկտրոդում անցկաց-
րած երկու տարին ևս փորձառու հոր թերում են այն եղբակացու-
թյան, որ նրանից բժիշկ չի գործ գալ, ուստի ավելի լավ է հա-
մարում պատրաստել նրան պառարության համար. «Հենց մի-
միայն այն միտքը, թե ես կարող եմ դատարկ սպորտամին գառ-
նալ՝ շատ իրավացիորեն վրդովում էր հորս, իսկ այն ժամանակ
այդպիսի ելք միանգամայն հնարավոր էր: Ես մի փոքր ժամանակ
խնդրեցի մտածելու... քանի որ տատանվում էի անզիկան հեե-
ղեցու բոլոր գոգմաներն անկասկած ճշմարտություն ընդունելու,
թեև, ընդհանրապես ասած, ես հաճույքով կանգ էի առնում գյու-
ղական պաստոր դառնալու մտքի վրա.... երբ մտածում եմ, թե
հետագայում ինչպիսի կատաղությամբ էին հարձակվում ինձ վրա
եկեղեցու հետևողները, ուզզակի ծիծակ է շարժում հիշելն անգամ,
որ ես ինք մի ժամանակ մտադրություն ունեի պաստոր դառնա-
լու:

1828 թ. Դարվինն ուղարկվում է Քեմբրիջի համալսարանը՝
աստվածաբանություն սովորելու: Այստեղ, այս շրջանում էլ, նա,
գանգատվելով ձանձրուցից, լսում է միայն այն դասախոսությունները, որոնք հետաքրքրում են իրեն: Քեմբրիջում անցրած երեք
տարին, ակադեմիական զբաղմունքների տևակետով, նրա հա-
մար «նույնպես կորած էին, ինչպես և էլեկտրոդում ու դպրոցում
անցկացրած տարիները»: Նա փորձել է զրադվել մաթեմատիկա-
յով և նույնիսկ մասնավոր գասեր էլ վերցրել է, բայց դարձալ ա-
պարդյուն. «Հետագայում ես խորապես ցավացել եմ, որ շեմ կա-
րողացել ձանոթանալ մաթեմատիկային գոնք այն շափով, որ որիէ
քան հասկանալի նրա առաջնորդող մեծ սկզբունքներից, քանի որ
այդ սկզբունքները յուրացնողները այնպիսի մարդկանց տպավո-
րություն են թողնում, որ նրանք մի զգայարան ավելի ունեն, քան
հասարակ մահկանացուները»: Այնուամենայնիվ երեք տարի հետո
Դարվինը հաջող քննություն է տալիս և բակալավրի աստվածա-
բանական գիտական աստիճան ստանում:


Սակայն նրա հետաքրքրությունն ու ձգտումները իրոք այլ հա-
նապարհով էին գնում. Երա իսկական համալսարանը բնուրյունն
էր և բնուրյունն էլ մնում է:



ԵՐԿՐՈԱՅԻՆ ԶԱՐԼԵՎ ԼԱՅԵԼ

Այս ուղղությամբ Գարվինի վրա երկու պրոֆեսոր խոշորագույն ազդեցություն են գործել՝ նրա մեջ ապագայի մեծ բնագետը ձևավորելու նկատմամբ՝ աստվածաբան Հենսլոն և երկրաբան Սեցմիկը: Հենսլոն, ինչպես վկայում է նաև Գարվինը, եղել է նույնապես երեկի միջատաբան, բուսաբան, քիմիկոս, երկրաբան ու հանքաբան: Հենսլոն է, որ Գարվինին մոտեցրել է իրեն և նրա տանը տեղի ունեցող շաբաթական հավաքույթներին է, որ մասնակցել է սկսել Գարվինը, նրա մշտական անգամը դարձնել, արդեղ ուրիշ գիտնականների հետ էլ ծանոթացել և առհասարակ Հենսլոյի բարեկամությունը շահել, մի բարեկամություն, որ «ամենից շատ ազգել է նրա ամբողջ կարիերայի վրա»: Վերջին տարիներին նա դրեթե ամեն օր զբոսանքներ է կատարելիս եղել Հենսլոյի հետ, որի պատճառով Գարվինին «Հենսլոյի հետ զրոսնողը» անունն են տվել: Այս զբոսանքների ժամանակ Հենսլոն սիրում է եղել խընամքով հավաքած բազմաթիվ մանր դիտողություններից հետառնություններ անելու և Գարվինի միտքն այդ ուղղությամբ սրելու: Այսպիսի մարդու մոտիկությունը Գարվինի վրա, նրա իսկ խոստովանությամբ, «խոշորագույն բարերար ազդեցությունն է արելու»: Այս նույն Հենսլոն է, որ Հորդորել է Գարվինին երկրաբանությամբ զբաղվելու և, մյուս կողմից, խնդրել է երկրաբան Սեցմիկին, որ նա, երկրաբանական իր էքսկուրսիաների ժամանակ, Գարվինին էլ հետն առնի: Սեցմիկը համաձայնել է: Սեցմիկի հետ կատարած Գարվինի երկրաբանական էքսկուրսիաները նրա համար իրոք խնկան դպրոց են հանդիսանում: Այդ էքսկուրսիաներից մեկի մասին նա ուղղակի այսպես է գրում: «Այս էքսկուրսիան ինձ այն անկասկած օգոստը տվեց, որ սովորեցրեց ինձ մի ամբողջ երկրի գեղողգիան հասկանալու»: Անշոշտ, առա այս բոլոր հանդամանքներն են պատճառ, որ Գարվինը Քեմբրիջում անցրած երեք տարին «իր երջանիկ կյանքի ամենագեղեցիկ շրջանն» է համարում:

Այնուհետև Գարվինի կարդացած բոլոր գրքերից նրա վրա խոշորագույն ազդեցություն են ունեցել Հումբուղի ճանապարհորդական «Անձնական տպավորությունները» և Հերշելի «Բնագիտության գիլիսոփայության ներածությունը»: Գարվինը գրում է. «Ոչ մի գիրք առանձին վերցրած և տասնյակ գրքեր միասին առած՝ չեն թողել ինձ վրա այնպիսի տպավորություն, ինչպիսին այս երկուսը»: Ու այդ գրքերի տպավորությամբ նրա մեջ բուն ցանկություն է առաջանում ճանապարհորդելու և անձամբ տեսնելու այն



flora

պանչելի վայրերը, որ տեսել է Հումբողը: Եվ Դարվինի այս տես-
շանքը շուտով իրականություն է դառնում:

4. Դարվինի շուշերկյա նախապարհությունը.— Անգլիա-
կան կառավարությունը 1831 թ. վերջերին «Բիգլ» կոչվող նավու է
սարքավորում նավորդական նպատակներով աշխարհի շուրջը մի
ճանապարհորդություն կատարելու: Սադ նավի վրա նատուրալիստի
մի ազատ ու անվճար տեղ է լինում: Ի՞նչ խորաթափանց մաքի-
տեր պետք է եղած լինի Հենլոն, ի՞նչպես խորը ճանաչած Դար-
վինին ու ի՞նչպիսի բարձր համարում ունեցած նրա մասին, որ նա-
չորդորի անփորձ ու անհայտ երիտասարդ Դարվինին շուրջերկրյա
այդ ճանապարհորդությանը մասնակցելու, «Բիգլ» նավակետին
էլ համոզի նատուրալիստի իր ազատ տեղը Դարվինին տալու: Ա-
ռանց մի վայրկյան տատանվելու Դարվինն ընդունում է այս առա-
շարկը, այն ինչ հայրը ծառանում է որդու ցանկության գեմ և կըտ-
րուկ կերպով մերժում իր համաձայնությունը, բարերախտաբար
հետեւալ վերապահումն անելով: «Եթե խելքը դլխին գոնե մի
ժարդ խորհուրդ տա այդ բայլն անելու»՝ նա իր համաձայնությու-
նը կտա: Խելքը գլխին այդ մարզն խկույն գտնվում է Հանձին-
հենց Դարվինի քեռու: Վերջինս անմիջապես շտապում է Շրյուեր-
իք. կոտրվում է Հոր Համառությունը և Դարվինը գնում է այդ ճա-
նապարհորդությանը: Եվ ո՞վ զարմանք, այն մարզը, որ վճռել էր
երկրաբանական ոչ մի գիրք ձեռքը շառնել, Հենալոյի խորհրդով
վերցնում է հետը երկրաբան լայելի հենց նոր լույս տեսած «Երկ-
րաբանության հիմունքները»— հետեւալ ուշագրավ զգուշացումն
ստանալով: «Ուշադրությամբ ուսումնասիրել այն, բայց ոչ մի գեպ-
քում չյուրացնել նրանում առաջադրված հայացքները»: Կատարիլում
է սակայն տրամադրութեան հակառակը. «Ես հպարտությամբ եմ մը-
տաբերում, գրում է Դարվինը, որ հենց իմ առաջին երկրաբանա-
կան էքսկուրսիան Սանտ-Յագոյում և Կանաչ Հրվանդանի արխի-
պելագում ինձ համոզեց լայելի հայացքների անվերջ տուավելու-
թյան մեջ այն ամենի վերաբերմամբ, որ ես հանդիպել եմ ինձ
հայտնի որևէ այլ երկրաբանական աշխատության մեջ»: Նա հի-
շատակում է մի քանի տեղ նաև, որ լայելի այդ գիրքն իրեն «մեծ-
օգնություն է ցույց տալիս և այն էլ ո՞չ միայն մի ուղղությամբ»:

Այս ճանապարհորդությունն է ահա, որ խսկական համալսա-
րան է հանդիսանում նրա համար, դառնում նրա կյանքի օտմենաւ-

կարենոր երեսոյթը» և «որոշում նրա հետագա ամբողջ գործունեությունը», տեկով զիեթի ամբողջ հինգ տարի:

Նավք ճանապարհ է ընկնում 1831 թ. գեկտեմբերի 27-ին և Հայրենիք վերադառնում 1836 թ. Հոկտեմբերի 2-ին: Այցելելով Ալտանտյան Օվկիանոսի՝ ելքության ու Աֆրիկային մոտ գտնվող կղզիները՝ նավք ուղղվում է դեպի Բրազիլիա և գանդաղ տեմպով իջնելով Հար. Ամերիկայի արևելյան ափերի մոտով, հասնում է Պաթագոնիա, բավական երկար մնում սրա ափերին, անցնում Հրո Երկիրը, շրջվում Պաթագոնիայի արևմտյան ափերը ու Խաղաղ օվկիանոսով գետի վեր, դեպի Հյուսիս բարձրանում, այցելում Գաւագագոսյան կղզիները ու այստեղից կտրելով այդ Մեծ Օվկիանոսը, թերվում է դեպի Տախիթի, իշնում նոր Զելանդիա ու Ավստրալիա, ապա լողալով Հնդկական օվկիանոսի ջրերում՝ հասնում է Աֆրիկայի արևելյան ափերին, ապա նորից Ալտանտյան օվկիանոս ու Հար.

Ամերիկա և վերջապես ետ դեպի Անգլիա:— Մինչ ամբողջ այս ժամանակամիջոցում նավն իր «Հոտոտումները» կատարելով՝ իր նպատակների իրազործումով է զրազվում, Դարվինը մըշտապես հնարավորություններ է ունենում ամեն տեղ ափ դորսգալու և այդ զանազան վայրերի ու երկրների գեոլոգիան և բուսական ու կինդանական աշխարհներն ուսումնասիրելու:

Կդառնա՞ր Դարվինը Դարվին, եթե նա այս ճանապարհորդությունը կատարած չիներ, ամենայն հավանականությամբ՝ ո՛չ Բնության բազմահատոր ու բազմածալ մեծ գիրքն է, որ նա կարդալ է սկսում այս ճանապարհորդության ընթացքում, թերթում նրա բազմախորհուրդ էջերը, դիտում ու հավաքում: «Ես միշտ գիտակցել եմ, որ իմ մաքի առաջին իսկական դաստիարակությունը կամ դիսցիպլինը այս ճանապարհորդությանն եմ պարտական»: «Էներգիկ աշխատանքն» ու «կենարոնացած ուշադրությունը» դասնում են նրա համար սովորությունն և ուղեկցում նրան թե այնուեակ ամբողջ ճանապարհորդության ընթացքում և թե այնուեակ կյանքի ընթացքում: «Ես համոզված եմ, որ Հենց այս եզանակով ձեռք բերված սովորությունը ինձ հնարավորությունն ուժեց կատարելու այն ամենը, ինչ Հաջողվեց ինձ կատարել գիտության մեջ»:

Հատկապես Հար. Ամերիկան է, որ մանրազնին հետազոտության առարկա է դառնում Դարվինի կողմից երկրաբանական,

բուսաբանական և մանավանդ կենդանաբանական, հնեաբանութեան ու զուգեռքրաֆիական տեսակետներով. և այսուղ է, որ նա առաջին անգամ, իր տեսած ու հավաքած փաստացի նյուրի հնշմամբ ու ազդեցորյամբ, միանգամայն իննարերարար, էլույուցիայի գաղափարին է գալիս: Ինչ չէին կարողացել տնել կամարկի ու իր պապի էվոլուցիոնիստական սպեկուլատիվ իդեաները, անում են Հրամայողաբար իրական փաստերը, նյուրական դպրումները: Առանձնապես կա Պլատոնի ու Պաթագոնիայի հակա կաթնասուների բրածոների, հսկա գրահակիրների քարացած մնացորդների և նույն կենդանիների այժմս ապրող տեսակների համեմատուրյունն է, որ Դարվինին մտքի է գցում, թե այժմյանները պետք է որ այն հներից սերած լինեն: «Ինձ զարմացրին, գրում է նա, Հարավային Ամերիկայի օրգանական ձևերի բաշխման: ո՞՛ քանի փաստերը և այդ աշխարհամասի նախկին ու այժմյան բնակիչների գեղողիական հարաբերությունները: Այդ փաստերն... բատ երեսութիւն որոշ լույս են սփռում տեսակների ծագման վրա, այդ գաղտնիքներից գաղտնիքի վրա»:

Այս տեսակետից մանավանդ Գալապագոսյան կղզիներն են, որ մեծ հոչակ են ստացել: Այս կղզիների փառան ու ֆլորան հն և նրանց համեմատությունը միմյանց ու մայր ցամաքի համապատասխան ձևերի հետ, որ իրենց հերթին Դարվինին դարձյալ նույն էվոլուցիայի մտքին են բերում և նրա մեջ այն կարծիքն առաջացնում, թե այդ կղզիների բնակչությունը պետք է, որ Հարավային Ամերիկայի մայր ցամաքից եկած լինի և այսուղ, համաձայն տեղական նոր պայմանների, փոփոխության ենթարկված. և նա որոշում է այս մտելին հետամտել ու այս ուղղությամբ աշխատանք կատրել՝ վերագրածից հետո: Մինչ վերադարձը սակայն, ճանապարհից, նա նամակներ է գրում իր տպագրությունների մասին դանազան ընկերությունների ու բարեկամների, հատկապես Հենս-Լոյին, և իր հավաքած հնեաբանական մատերիալից որոշ նմուշներ ուղարկում, որոնք գիտական շրջաններում մեծ տպագրություն են անում, և այդ մինչ այն աստիճանի, որ Սեցմիկը հարկ է համարում այցելելու Դարվինի հորը և ասելու, որ երիտասարդ Դարվինը «աշքի ընկնող տեղ կդրավի ժամանակակից գիտնականների շարքում»:

շնորհած ու վեցի թվուն չ պահ համար զելլիս և
առջը կ պահ քաղաք արքայությունը ու նաև Աթոռամ ԱՄ
- ման խոհական պահ ու պատու չէ և խոհակառակի
- պահ Շինուարդ պարագան քահ պատուածի համար պահ
- պահածաւու ու պատուածաւու պահ պահածաւու պահ




Պարագան պահ պատուածաւ

A 15974

9944

5. Դարվինը Դառնում. Պետք է մտածել միայն ու երեսկայել, թե Դարվինի աշբն ու ունակություններն ունեցող մեկը ի՞նչպիսի պիտղուրյուններով և ի՞նչ քանակի ու որակի նյութերով ժամարեկոնված կվերագառնար այդ ճանապարհորդությունից՝ հետագայի աշխատանքների համար։ «Տրոպիկական բուսականության շրեղ պատկերները», գրում է Դարվինը, «Պաթագոնիայի վեհափառական անապատները և Հրու երկրի անտառապսակ լիոները ինձ վրա անջնջելի տպավորություն թողին։ Մերկ վալրենու տեսարանն իր հայրենի երկրում՝ այնպիսի երկուցի է, որ չես մոռանա ամբողջ կյանքումդ։ Խորին բավականության զգացումով հմ հիշում ստացած գիտական մի քանի արդյունքների մասին։ Այս ճանապարհորդության ընթացքում, ինձ թվում է, ես լարում եմ իմ բոլոր ուժերը բացառապես նրա համար, որ հաճույք էի զգում այդ հետազոտությունների մեջ և բուռն կերպով ցանկանում եմ ընթառամատկան տեղեկությունների հոկայական պաշարին ավելացնել զարգյալ մի քանի նորերը։ Բայց ինձ առաջնորդում էր և փառասիրական մի միտք՝ գիտնականների շարքում իմ տեղը բռնկու»։

Վերաբարձից երկու տարի հետո (1838 թ.) Դարվինն ամուսնանում է, իսկ երեք տարի հետո էլ (1842 թ.) հետանում կանգնի եռուցիսից, հաստատվում Դառն կարվածքում և զգուղական այդ անդրբության մեջ իր գիտական աշխատանքներին նվիրվում։ Նրա կյանքի «գլխավոր հաճույքն ու միայնակ զբաղմունքն» այնուհետեւ այստեղ աշխատանքն է դառնում։ Կարվելով սակայն աշխարհային հաճույքներից՝ նա գրավոր շատ սերտ հարաբերությունների մեջ է մտնում թե հայրենի և թե օտարագիր գիտնականների հետ, մտքերի փոխանակություն ունենում նրանց հետ, մշակում իր բերած հարուստ մատերիալը և շարունակում իր դիտողություններն ու փորձերը Դառնում։ Մի կողմէից նա իր գեղուցիկական և զողողիկական գիտողություններն ու աշխատանքներն է սկսում կարգի բերել, պատրաստել ու հրատարակության տակ, մյուս կողմէից, զըրանց զուգահետեւ (դիւնեւ 1837 թից) անսպառ եռանգով փաստեր հավաքում ու դասավորում էվոլյուցիոն ուսմունքի համար, այս մասին հատուկ նոտից գիրը պահում և նրա մեջ զրանցում կենդանիների ու բույսերի շրջափոխության վերաբերյալ բոլոր նյութերը։ և այս ամենն այնուհետև՝ ամբողջ 20 տարի։ Դեռ 1844 թ. Դարվինը զրում է իր բարեկամ բուսաբան Հովհերին։ «Ես մի շաբք




գրքեր եմ կարդացել գյուղատնտեսության և այգեղործության վերաբերյալ և երբեք չեմ դադարել փաստներ հավաքելուց: Վերջապես լուսավորող մի ճառագայթ եկավ ինձ և ես այժմս (հակառակ այն հայացքիս, որից ելել եմ) համոզված եմ, որ տեսակները (առ հնում է որպես սպանության խոստովանություն) անփոփոխ են: Հատկապես բնտանի կենդանիներն ու մշակովի բույսերը և նրանց ընձեռած փոփոխություններն են, որ նա իր ուշադրության կինորոնն է առնում և, ինչպես կտեսնենք, սրանց ուղղակի իր մեծ ուսմունքի համար հիմունք ու ելակետ է զարձնում: Քսան տարկա ընթացքում նա այնքան, որ այնպիսի հարուստ նյութ է կուտակում, որ մտադրվում է այդ ամենը չորս հատորով հրատարակել. սակայն կողմնակի մի հանդամանքի գրկումով և բարեկամ-բնիկերների հարգորներով՝ նա 1859 թվի նոյեմբերի 12-ին մի հատորով լույս է ընծայում իր գլուխ գործոցը՝ «Տեսակների ծագումը»:

Այս գիրքը, որի հրատարակումով մի նոր գարագլուխ է սկզբանավոր բիոլոգիական գիտությունների մեջ, հափշտակությամբ ու էնտոլիագմով է ընդունվում երիտասարդության կողմից և սառն ժխտականությամբ ու կատաղի հակառակությամբ՝ ների կողմից: Եթե այդ գրքի գերմաներեն թարգմանիչն իր առաջարանում այս հարցն է տալիս, թե՝ ի՞նչ կլինի քո հալը սիրելի ընթերցող երրդու այս գիրքը կարդացած կլինես», ցույց է տալիս թե ի՞նչ անօրինակ տպավորություն, ի՞նչ շշմեցուցիչ ազդեցություն է արել նա ժամանակակիցների վրա: Այդ է ասում անշուշտ նաև գրքի նոց միևնույն օրում սպառված լինելը:

6. Գարվինի ուսմունքի գիտական և սոցիալ-տեսեսական նախադրյալները. Ոչ մի էվոլուցիոն ուսմունք չի եղել այնպիս նախապատրաստված, ինչպես Դարվինինը և ոչ մեկը նրանցից : Ի ունեցել էվոլուցիայի երևոյթի գիտական այնպիսի բացառություն, ինչպիսին Դարվինինը: Անշուշտ այս պատճառների մեջ պիտք է որոշել Դարվինի ուսմունքի հաջողությունը:


Նախ՝ 19-րդ դարի առաջին կիսում է, որ զարգանում, խորանում և կամ նոր են առաջանում բիոլոգիայի այն ճյուղերը, որոնց ընձեռած բազմաթիվ նորանոր տվյալները գալիս են միարան կենդան ձևերի կատարած էվոլուցիան, նրանց զարգացումը՝ հիմնավորելու Բիոլոգիական ամենահին գիտությունը՝ սիստեմատիկան՝ խիստ ընդարձակվում, նորանոր հայտնաբերված բազմաթիվ



Դարձվել 38 տարեկան հասակում

ձեռքով հարստանում է: Կենդանաբանության մեծ ռեֆորմատորը՝ Կյուսիկն, նորագոյն մտքով, համեմատական անատոմիա և հնեաբբանություն կոչված գիտություններն է Հիմնագրում. Ելայդենն ու Շվանը բջջային տեսությունն են տալիս, մի տեսություն, որով բուսական և կենդանական միլիոնավոր ձեռքը մի միասնության հնգերածվում, իրենց մի ընդհանուր արմատից ծագած լինելը թեւղում. Բեռն իր սրանչելի հետազոտություններով նորագոյն սաղմենաբանության ամուր հիմքն է զնում, իսկ Վագները՝ կենդանիների աշխարհագրությունը ստեղծում: Խոկ սրանք են աշա բիոլոգիական այն գիտությունները, որոնցից յուրաքանչյուրն իր կողմից ու իր գծով այնքան ու այնպիսի նորանոր փաստեր են տալիս, այնպիսի արդյունքներ երեան հանում, որոնք բոլորն էլ միայն մի ընդհանուր բարբառով հն խոսում՝ օրգանական աշխարհի զարգացման պրոցեսի արդյունք է: Եվ այն Դարվինի հանձարն էր, որ կարողացավ հասկանալ այդ բարբառը, կարողացավ այդ գիտությունների մատակարարած արդյունքների վրա հիմնել իր ուսմունքի հոյակապ շենքը: Զարմանալին ու հիացմունքի արժանին այստեղ այն է, որ մինչ 30 տարի առաջ Կյուսիկն իր ստեղծած գիտությունների՝ համեմատական անատոմիայի ու հնեաբանության ընձեռած փաստերի լեզվով ջախչախեց իր ժամանակի էվոլուցիոն ուսմունքը, նաև այդ գիտությունների նորագոյն ու մեծաբանակ փաստերը նոր վարպետի ձեռքին նրա նոր շենքի համար հաստատուն հիմնաբարեր հանդիսացան, նախկին դրությունն իր հակագրությանը փոխվեց:

Այնուշենու Դարվինի հանդես գալը համընկնում է 19-րդ դարի առաջին կիսում Անգլիայում տեղի ունեցած արդյունաբերության բուռն թափի, նրա արդյունաբերական հեղաշրջման հետ ծովերի թագուհին, համաշխարհային այդ հզոր գաղութային պետությունը, տեր էր արդեն հարուստ երկրների, նրանց հումքին, իսկ այդ հումքը պետք է մշակվեր մայր երկրում. ուստի նրա քաղաքները գտանում են կենտրոններ՝ արդյունաբերության, վաճառականության, կուլտուրական կյանքի. հետեաբար՝ մեծանում ու աճում են բնակչությամբ: Արդյունաբերության և ազգաբնակչության (ներառյալ և բանվորությունը) աճը և սրանց հետևանքում առաջացած հումուզիների ու սննդամթերքների մեծ պահանջներն իրենց հկրմին դրդիչ են հանդիսանում Անգլիայի խոշոր գյուղա-



Դարվինը 50-ական թվականներին «Տևակների ծագումը» ստեղծագործութիւն

տնտեսության գարգացման համար. որոնվում են ավելի էֆեկտիվ միջոցներ լավացնելու և ազնվացնելու կուտուրական բույսերի և ընտանի կենդանիների ցեղերը, նրանց արտադրանքները բարձրացնելու՝ կյանքի առաջադրած պահանջներն ըստ կարելույն բավարարելու համար: Սելեկցիան, ընտրություններ, որ այդ ժամանակ մեծ շափով կիրառվում էր Անգլիայում կենդանաբուծների և բուսաբուծների շրջաններում՝ ձևափոխելու ընտանի կենդանիների ցեղերը, կուտուրական բույսերի սորտերը՝ նրանց բարելավման, մարդու համար օգտակար ու շահավետ ուղղություններով և դահանդպում է արդյունապես. ստացվում են խոզերի (յորկշիր, յանկշիր, բերկշիր և այլն), խոշոր (օրինակ՝ շորտհորն) ու մանր եղջյուրավորների, հավերի, աղավնիների, ինչպես և կուտուրական բույսերի նոր ցեղեր ու սորտեր: Եվ այս ամենը կատարվում է Գարվինի օրով, երա աշխի առաջ: Այլև նա դիտեր ու ծանոթ էր, թի ինչպես թոշնաբուծական ընկերություններն ու ակումբները ո՛չ միայն նոր ցեղեր ու սորտեր են առաջ բներում սելեկցիայով, այլև ինչ ինչ հատկանիշներ են ուժեղացնում կարծ կամ երկար ժամանակամիջոցում և գրանց շնորհիվ մրցանակներ շահում: Ընառությամբ կատարված ձևափոխությունն ուրեմն իրական փաստ էր Գարվինի օրով: Այս իսկ պատճառով Գարվինը գարգացման պրոբլեմը լուծելու համար ընտանի կենդանիներից ու կուտուրական բույսերից է սկսում, այսինքն այն օրգանիզմներից, որոնք մինչ այդ միանդամայն անուշագրության էին ժամանված պաշտոնական գիտնականների կողմից, զիտուրյան ներկայացուցիչների կողմից, օրգանիզմներ, որոնք մի տեսակ «փորթ զավակներ» էին դիտության համար, բնականից գուրս՝ արհեստական էին համարվում ու չին հարմարվում բնական սիստեմում: Գարվինի մեծությունն ու նրա հանճարի զորությունը նաև այստեղ է երևում, այս խնդրում. որ նա հենց այս արհամարհված օրգանիզմներն է ուղղակի իր ուսմունքի հիմքը գարձնում, նրանցից ելնում:

Ահա այս ժամանակաշրջանում, այս բարեհաջող պայմաններում է, որ Գարվինն արձանացնում է իր ուսմունքը. կամարկի ուսմունքը նրա սրտովը չէր. «Երկինքը պահպանի ինձ, գրել է նա, կամարկի զարգացման տեսնենց անմտությունից»:

7. Գարվինի ուսմունքի ուղին ու ծուծը. Տեսակները փոփոխական են և ո՛չ կայուն կամ անփոփոխ: Փոփոխակները (զարթետես-

Դիերը) սկիզբն են նոր, ապագա տեսակների: Տեսակների անփոփոխությունը երևութական է, մեզ միայն թվացող. իրականության մեջ նրանք փոփոխվում և նոր ձևեր, նոր փոփոխակներ են կազմում՝ թեկուզ և շատ երկար ժամանակամիջոցում. ապացուց սրբան՝ բոլոր ընտանի կենդանիներն ու կուլտուրական բույսերը—տառ եկած վայրի ձևերից դարերի ընթացքում, մարդու ձեռքով, քննորության միջոցով: Բայց ընտրություն կատարելու համար ընտրելի ձևերի միջև միմյանցից տարբերություններ ներկայացնող անհատներ պետք է լինեն մեջտեղ. և իրոք՝ այդ տարբերությունները կան միշտ, միայն թե պետք է կարենալ տեսնել այդ տարբերությունները: Միևնույն ծնողներից տուածացած զավակները կամ սերունդները երբեք իրար այնպես չեն նման, ինչպես մի խնձոր միջից կիսած, հապա միշտ ավելի կամ պակաս շափով միմյանցից տարբերվում են, հետևաբար և փոփոխական են: Ահա այդ փոփոխված ու իրարից ինչ ինչ տարբերություններ ներկայացնող ձևերի մեջ է, որ մարդը, բուծողը զիտակցաբար ընտրություն է կատարում, ջոկում է այն անհատները, որոնց այս կամ այն հատկանիշը, փոփոխություն հանդիսացող այս կամ այն նշանը ցանկալի է համարում իրեն համար: Այնուհետև զուգավորելով իրեն պետքական այդ հատկանիշներն ունեցող արու և էդ ձևերը միմյանց հետ և որանցից նոր սերունդ ստանալով, բուծողը նոյն մտքով ընտրությունն այժմս այս նոր սերնդի այն անհատների միջև է կատարում, որոնց վրա տվյալ հատկանիշն ավելի ցայտուն կերպով է երևում և այսպես շարունակարար, մինչև ցանկալի հատկանիշի բավարար շափով ստացվելը: Ակնհայտ է, որ այսող մշտապես երեւ ֆակտոր են գործի մեջ. նախ՝ փոփոխականություն, ապա այդ փոփոխվածի անցումն ժառանգաբար, ուրեմն՝ ժառանգականություն և վերջապես՝ մարդու ձեռքով կատարված քննորություն—արենատական ընտրություն: Ահա՝ այն ճանապարհը, որով առաջ են եկել բոլոր ընտանի կենդանիները և մշակովի բույսերը, այսօր էլ նոր սորտեր, նոր ձևեր այս միևնույն ճանաչ պարհով են ստացվում:

Այսպես, այս ճանապարհով են առաջանակ առում է Դարձինը, նաև այն անհամար, տեսանելի ու սնտեսանելի, ստորակարգ և բարձրակարգ բույսերն ու կենդանիները, որոնք շրջապատում են մեզ, որոնք բռնած են ամբողջ ազատ քննորությունը:

Գործում են արգյոր ալստեղ, ազատ բնության մեջ էլ նույն արեք ֆակտորները, ինչ որ և ընտանեցման պայմաններում՝ մշտեղ:

Թե ազատ բնության մեջ էլ փոփոխականություն գոյություն ունի՝ դրանում ո՞չ մի կասկած. և ո՞վ ավելի, քան Դարվինը, աշխարհը շրջած, ծով ու ցամաք ոտքի տակ տված, խիստ բազմազան միջավայրերում շրջադարձ, այդ միջավայրերի կենդանական և բուսական ձևերին ծանոթացած. Դարվինը կարող էր ապացույցներ բերել այդ երեսութիւնամար: Թե այնուհետև բնածին փոփոխություններն էլ առնասարակ ժառանգաբար անցնում են՝ սա էլ կասկածից գուրա է. ապացույց՝ ամենքին հայտնի — առօրյա պրակտիկան: Սակայն կատարվում է արգյոր ընտրություն նաև ազատ բնության մեջ. և եթե այս՝ ազատ ո՞վ է այնտեղ ընտրություն կատարողը, ո՞վ է ընտանեցման պայմաններում գիտակցաբար ընտրություն անող մարդու զերը խաղում այնտեղ, ազատ բնության մեջ Ահա այս հարցն է, որ մեծ գլխացավանք է պատճառում Դարվինին, երկար մտածումների առիթ տալիս նրան: «Ես շատ շուտ համոզվեցի, գրում է նա, որ կենդանիների և բույսերի օգտակար ցեղեր առաջացնելու գործում մարդու հաջողության դրավականը ընտրության մեջ է թաքնված: Սակայն թե ի՞նչ եղանակով ընտրության սկզբունքը կարող էր կիրարկվել օրգանիզմների վրա բնական պայմաններում՝ զեռ երկար ժամանակ՝ դրանից հետո ինձ համար գաղտնիք էր մնում»: 1838 թ. հոկտեմբերին նա, «զվարճության համար», կարգում է Մալթուսի «Աղքարնակչության մասին» գրքածքը և մեկեն ի մեկ այն մտքին գալիս, թե՝ բնությունն ի՞նչն է կատարում այդ ընտրությունը գոյուրյան կովի միջոցնվ: «Բույսերի ու կենդանիների կենցաղների վերաբերմամբ երև կարատե զիտողություններով նախապատրաստված լինելով՝ եռ գնահատեցի ամենուրեք տեղի ունեցող գոյության կովի ամբողջ նշանակությունը և միանգամից ապշեցա այն մտքից, որ այդպիսի պայմաններում օգտակար փոփոխությունները պետք է պահպանվեն, իսկ անօպուտները՝ ոչնչանան: Ահա՝ վերջապես ես ձեռք բերի այն տեսությունը, որով առաջնորդվելով՝ կարող էի շարունակել աշխատանքս»:

Ահա՝ գոյության կովի միջոցով բնության մեջ կատարվող այս ընտրությունն է, որին Դարվինը, արևետականի զիմաց, կոչում է

բնական ընտրություն։ Ահա և երրորդ ֆակտորը։ Ում չի հայտնի արդյոք այն անօրինակ «շոազլությունը», որ գոյություն ունի բնության մեջ ապրող էակների բազմացման գործում։ Կենդանիներ-կան, հատկապես պարագիտ կենդանիներ, որոնք չե՛ն թե հազարներով ու հարյուր հազարներով են ձու գնում, հապա միշտններով և բույսեր՝ որոնց փոշուց՝ արական սեռական այդ բջիջներից և կամ սպորավորներից ոմանց սպորներից ամպեր են գոյանում քամու միջոցով և սակայն դրանք բոլորը չե՛ն, որ իրենց վերջավորմանը, իրենց նշանակմանը, իրենց, այսպես ասած՝ «նպատակին» են հասնում։ Բոլոր ձիերը չեն, որ բեղմեավորվում, զարգանում և այնուհետև հասուն ու բազմացման ընդունակ ձեւը են դառնում։ Անհատական զարգացման ճանապարհի բոլոր աստիշաններում (ձու, թրթոր, հարսնյակ, սեռականորեն հասուն) նըրանց ճնշող մեծամասնությունը ոչնչանում է և միայն ամենաչնշն տոկոսը հասունության հասնում և այնուհետև էլ միայն մեկը կամ երկուսը, լավագույն դեպքում մի քանիսը, բազմանալով՝ իրենց նմանն առաջացնում որպես սերունդ։ Բազմության այդ ոչնչացման և խիստ սակավաթիվների բազմացման աստիճանի հասնելու գործում անշուշտ միայն կույր պատահականությունը չէ՛, որ դեր է խաղում, հապա նաև նրանց յուրաքանչյուրի ունեցած անհատական թերությունները կամ, այլ կերպ առած, նրանց՝ ավելի կամ պակաս շափով հարմարված լինելը միջավայրին, շրջապատին, արտաքին պայմաններին։ Նշանակում է՝ միջավայրի կամ շրջապատի կենսական անենական պայմանների նկատմամբ հազմաղ են հանդիսանում ու վերապրում, իրենց գոյությունը պահպանում այն ձեւը կամ անհատները, որոնք իրենց նմանների գիմաց որևէ առավելություն ունեն, որոնք այսպիս կամ այնպիս ավելի են հարմարված տվյալ պայմաններին գիմանալու և ապրելու համար ու ապրում են, իսկ մնացածները, այդ պայմաններին նվազ շափով հարմարվածները կամ միանգամայն անհարմարները, այդ միևնույն պայմաններում ապրելու գոյություն պահպանելու շահսեր շունեցողները՝ ոչնչանում, շրնջվում են։ Նշանակում է՝ այստեղ էլ ընտրություն է կատարվում, ընտրություն սակայն ոչ թե գիտակցաբար, մարդու ձեռքով, հապա հենց իրեն՝ բնուրյան ձեռքով, անգիտակցաբար, Դարվինի կող-

մից կոչած՝ զնյության կովի, գոյության պայքարի միջոցնվ, կամ Սպենսերի կոշմամբ՝ առավել հարմարվածի վերապեման միջոցնվ։ Ահա ա՛յապես, այս ճանապարհով է կատարվել ու կատարվում օրդանական աշխարհի էվոլուցիան Դարվինի պատկերացումնվ։ Օրդանական աշխարհն իր այսօրնա բույսերի ու կենդանիների, ներառյայ և՛ մարդը, բազմազանությունն ու անհամար բազմությունը պարտական է անհուն դարերի ընթացքում կատարված ու կատարվող այն դանդաղ, բայց և հոյակապ պրոցեսին, որ էվոլուցիա և կոչվում և որի ժամանակ նախաշխարհի սկզբնական պարզ ու ստորակարգ ձևերը աստիճանաբար զարգացել և ավելի ու ավելի քարդ և բարձրակարգ, ինչպես և բազմապիսի գործառնությունների ընդունակ ձևեր են տվել. մի պրոցես, որի ընթացքում սակայն շատ ու շատ ձևեր էլ, շիարողանալով այլևս դիմանալ—հարմարվել ստեղծված պայմաններին, իսպառ ոչնչացել են ու միայն իրենց քարացած մնացորդներն են թողել երկրիս դանազան խավերում որպես իրական գոկումենտներ երկրիս մի ժամանակ ունեցած այլ քնակչության։

Այսպես ուրեմն օրգանական աշխարհն առաջացել, զարգացել ու շարունակում է զարգանալ և գոյություն պահպանել միմիայն քնական ուժերի միջոցնվ, բնական ճանապարհով։ Ո՛չ մի արաշագործույն, ո՛չ մի գերենական ուժի միջամտուրյուն։ Կենսական արտաքին պայմաններն են, որ մի տեսակ կաղապարներ են հանգիստանում, որոնց մեջ բնական ընտրուրյունը նորանոր ձևեր, նորանոր տեսակներ է թափում-ձուլում։ Այն ամբողջ ու զարմանալի նպատակահարմարությունը, որ մենք տեսնում ենք բնության մեջ, այն նպատակահարմար շենքերն ու կառուցվածքները, որ ցուց են տալիս կենդանական և բուսական ձևերը՝ սկսած ամենաստորիններից և բարձրացած վեր մինչև մարդը, ահա ա՛յս ճանապարհով է առաջ եկել, այսինքն՝ անընդհատ գործող բնական ուժերի պղեցությամբ, ուժեր, որոնք թեև գործում են այդպես առանց որևէ նպատակի, բայց որոնց արդյունքը երեմն նաև նպատակահարմարի է հանգում։

8. Դարվինի ուսմունքի նշանակությունը և նրա գնահատականը մարքսիզմի կլասիկների և այլոց կողմից։ Ահա այս է երկու խորոշ ասած ուշն ու ծուծն այն ուսմունքի, որն իր ստեղծողի անունով Դարվինի ուսմունք կամ Դարվինիզմ է կոչվում։

Այս պարզ խոսքերը սակայն իրենց մեջ մի ամբողջ փիլիսո-
փայուրյուն են բովանդակում, մի ամբողջ աշխարհայացք պարու-
նակում — մատերիալիստական աշխարհայացք, այն էլ դիալեկ-
տիկ-մատերիալիստական աշխարհայացք: Օրգանական աշխարհն
ըստ Դարվինի ուսմունքի, արտահայտած մեր Դավիթ Անհաղթի
բնորոշումով՝ «Շուման և ծորման» դրության մեջ է մշտապես այս
ուսմունքով այս աշխարհից միանգամ ընդ միշտ դուրս են շպրտվել
վերբնական ուժերը և այս աշխարհն էլ, անօրգանականի հետ
մեկտեղ, միենույն բնական ուժերին ենթարկվել, միենույն ուժե-
րի ազգեցության տակ դրվել:

Այս է պատճառը, որ այնպես խորն ու սրտանց են ատոմ
այս ուսմունքը կրոնն ու նրա ներկայացուցիչները, այս է պատճա-
ռը, որ այնպես խորը, սրտանց ու հոգու ողջ կարողությամբ են
սիրում ու պաշտպանում այս ուսմունքը պրոգրեսի բոլոր մարդիկ,
այս է պատճառը, որ այնքան բարձր են գնահատում այս ուս-
մունքը մարքսիզմի կլասիկները, բանվոր դասակարգը, ողջ աշ-
խատավորությունը:

Էնգելսը, որ «Տեսակների ծագման» առաջին ընթերցողներից մեկն
է եղել, գեռ չվերջացրած նրա ընթերցումը, 1859 թ գեկտեմբերին (իսկ
պիրքը լույս է տեսել նոյեմբերի 24-ին)՝ գրել է Մարքսին. «Դար-
վինը... գերազանց է: Այս բնագավառում նպատակարանուրյունը
(տելեոլոգիան) գեռ խորտակված չէր, իսկ այդ արդեն արված է:
Բացի դրանից մինչև այժմս գեռ այդպիսի հոյակապ փորձ չէր ար-
ված բնության պատմական զարգացումն ապացուցելու համար և
այն էլ այսպիսի հաջողությամբ» (ընդգծումները մերն են՝ Ա. Տ.—
Պ.) Խորտակված նպատակարանուրյունը. այս նշանակում է խոր-
տակված իդեալիզմ, խորտակված իդեալիստական աշխարհայացքը:
Որովհետեւ եթե մի Դիզրո կարող է բացականչել, թե «Բավական է
թիթեռի մի թիր միայն, որ խորտակվի աթեփստների բոլոր կառու-
ցումները», ապա մեկն հասկանալի է դառնում Դարվինի կտու-
րած գործի հսկայական արժեքը՝ նպատակահարմարությունը, հե-
տեւրար և թիթեռի մեն իր ամբողջ նպատակահարժար կառուց-
վածքով, արդյունք աննպատակ գործող ուժերի, այն ինչ մեծանուն-
էնցիկլոպեդիստը թեխնորեն էր բացատրում այն:— Մի այլ տեղ-
էնգելսը նույն միտքն ավելի պարզ է արտահայտել. «Դարվինն
ուժգին հարված հասցրեց բնության մասին եղած մետաֆիզիկա-

Դան Հայացքին, ապացուցելով, որ ներկայիս ամբողջ օրդանական աշխարհը, բուզսերն ու կենդանիները, հետեաբար և մարդը, միգիտնավոր տարիներ տեղով զարգացման պրոցեսի արդյունք են»։ Նույն էնգելսն է, որ Հայտարարել է, թե «Դարմինը Հայտնագործել է օրդանական բնության զարգացման օրենքը»։ — Բարձր գնահատական է տվել Դարմինի գործին նաև Մարքսը. «Ծատ արենքավոր է Դարմինի աշխատությունը և ինձ պետք է գալիս որպես բնագիտական հենարան՝ պատմական դասակարգային պայքարի համար»։ Չնայած բոլոր թերուրյուններին, այստեղ ո՛չ միայն մահացու հարված է Հասցված «նպատակաբանությանը» բնական գիտությունների մեջ, այլև մապերիկ եղանակով բացատրված է նրա խելացի նշանակությունը»։ Ահա, Մարքսն էլ կարեոր է Համարել շեշտելու նպատակաբանությանը արված մահացու հարվածի մասին, այնքան կարեոր ու սկզբունքային է այդ գաղափարը։ Էնդեւսին գրած իր նամակներից մեկում Մարքսը այսպես է զնահատել «Տեսակների ծագումը»։ «Դարմինի գիրքը բնապատմական հիմունք է տալիս մեր Հայացքներին»։

Ծատ բարձր են գնահատել Դարմինի ուսմունքը նաև մարքակիզմի մեր օրերի կլասիկները։ Բայ Լենինի՝ «Դարմինը վերջ է տվել կենդանական և բուսական տեսակների մասին եղած այն Հայացքին, թե նրանք բոլորովին անկապ, պատահական; «աստծուց ստեղծված» ու անփոփոխ են և առաջին անգամ բիոլոգիան դրել է միանգամմայն գիտական հոգի վրա, հաստատելով տեսակների փոփոխականությունը և նրանց միջև եղած հաջորդականությունը»։

Այսպիսի բարձր գնահատականներ են տալիս Դարմինի գործին մարքսիզմի կլասիկները, որովհետև Դարմինը «Համարձակություն, վճռականություն է ունեցել փշրելու հինք և ստեղծելու նորույն նկատի շունենալով ոչ մի արգելք, հակառակ ամենի» (Ստալին). որովհետև այդ ուսմունքով «Հեղափոխականացված են մեր բոլոր գաղափարները» (Ալեքս.), որովհետև այս ուսմունքը «կայծակի հանգարծակի փայլատակումն է», որ «մութ գիշերը ձանապարհը կորցրած մարդու հանապարհն է լուսավորում և տանում նրան հենց այնտեղ, որտեղ նա պետք է գնար» (Հեքսլի), որովհետև այս ուսմունքը «մարդկային իմացության ամենատեժ նվաճումներից մեկն է», «մարդկային ոպու խարձրագույն հաղթանակը» (Հեկլել), որով-

Հետեւ Դարվինն «այն ամենախորունկ ռեվոլուցիան է կատարել քնական գիտությունների բնագավառում, որ երբեք կատարված է» (Տիմբիրյագիկ):

9. Դարվինի սխալները, վրիպումները. Շատ բարձր դնահատական տալով Դարվինի ուսմունքին բնդհանրապես, մարքսիզմի կլասիկները սակայն այն անձերից չեն, որ աշք փակեին նրա այդ ուսմունքի մեջ հանդիս եկող ակնհայտ սխալների, վրիպումների, թերությունների դիմաց՝ և բննադատական վերաբերմունք ցուց շտային սրանց՝ ուղղելու կամ թեկուզ և ի ցուց զնիւու մըտքով:

Լինելով միայն տարերայնորեն դիալեկտիկ՝ Դարվինն անշուշտ պիտի երեան հաներ և իր դասակարգի բոլոժուական սահմանափակվածությունը և սխալների մեջ ընկներ: Նշենք գրանցից մի երկուոր:

Օրգանական աշխարհում իրոք տեղի ունեցող գոյության կոսկին Դարվինը միակողմանի և շատ լայնածավալ նշանակություն է տրվել: Բանն այն է, որ իրականության մեջ, օրգանիզմների գերժակալության հետևանքով կատարվող բնական ընտրության ժամանակ նրանց միջև ո՞շ միայն կոիվ կա, հապա նաև երբեմն փոխադարձ օգնություն—օժանդակություն, ինչպես ցուց են տալիս այն երկուլիմները, որ կոչվում են համայնակեցություն կամ հասարակայնություն, հոտայնություն, սիմբիոզ, սեղանակցություն (կոմենտարիզմ), պարագիտիզմ և այլն: Այս բոլոր գեպֆերում, գոյության կովում, օրգանիզմները միմյանց ավելի կամ պակաս շափով օգնում, նպաստում են, փոխադարձաբար միմյանց կյանք տանելի գարձնում: Այս վաղոց նկատված է, որ բուսական աշխարհը կենդանականին թթվածին ու սննդով է մատակարարում, իսկ կենդանական աշխարհը բուսականին՝ ածխաթթու և պարարտանցություն: Այնպիս որ «Բնության մարմինների փոխազդեցությունն իր մեջ ներդաշնակություն և բնդհարում (կոլիզիոն), կոիվ և կոռպերացիա է պարունակում» (Էնգել):

«Ժեսակների ծագման» մեջ Դարվինը քանից հիշում է, որ օրգանիզմների միջև նրանց գերբնակշտության հետևանքով առաջացուը դրյություն կոիվը «Մալթուսի ուսմունքն է՝ կիրարկված ամբողջ կենդանական և բուսական թագավորության վրան: Բայց նա չի նկատում, ինչպես իրավամբ դիմում է Մարքսը, որ «հայտնագոր-

ծելով կենդանիների և բույսերի թագավորության մեջ «հրկրաշափական» պրոգրեսիա, հենց դրանով Հերքում է Մալթուաի տհությունը», որովհետև Մալթուաը կենդանիների և բույսերի մեջ «թվաբանական» պրոգրեսիա էր տեսնում, այն ինչ՝ «յուրաքանչյուր ոք, գրում է ինգելսը, անմիջապես և առանց մալթուայան ակնոցների կարող է նկատել գոյության կոփվը բնության մեջ, նկատել այն հակագրությունը, որ գոյություն ունի բնության շուազությամբ առաջացած սպազմերի անթիվ բազմության և նրանցից հասունության հասած շնչին քանակի միջև»:

Ինգելսն էլ հատկապես մատնանշել է գերբնակշության հետևանքով առաջացած գոյության կովի սահմանափակվածությունը. «Անհրաժեշտ է, գրում է նա, խստորեն տարբերել սրանից այն դեպքերը, երբ տեսակները փոփոխվում են, հները նրանցից մեռնում, իսկ նրանց տեղ նորերը բռնում, ավելի զարգացածները առանց այդպիսի գերբնակշության առկայության, օրինակ՝ բույսերի և կենդանիների նոր վայրեր տեղափոխվելու— գաղթելու ժամանակ, որտեղ կլիմայական, հողային և այլն նոր պայմանները փոփոխություն են առաջացնում: Եթե այստեղ հարմարվող անհատները վերապրում են և նոր տեսակ կազմում... իսկ... անկատար միջակա ձևերը մեռնում են, ապա այդ կարող է առաջանալ և փաստորեն առաջանում է առանց որևէ մալրուսականության» (ընդգծումներն իրենն են):

Այսպես ահա, առանց քննադատության ընդունելով Մալթուայի «ուսմունքը» և փոխադրելով այն հասարակական կյանքից կենդան բնության մրա, Դարվինը կատարում է և հակառակը, արսինքն՝ բիոլոգիական օրինաշափությունները, գոյության կոփվն ու բնական ընտրությունը տարածում է մարդկային հասարակության մրա և ուրիշների համար էլ դուռը բաց անում նույնն անելու, մի բան, որ իրոք կատարվել ու այսօր էլ կատարվում է. այսպես կոչված սոցիալ-դարվինիզմը, սոցիալական այդ ոեակցիոն «ուսմունքը», որ մեր օրերում ֆաշիզմի ռասայական առավել ոեակցիոն ու մարդակեր «թերիային» վերածվեց, ոչ այլ ինչ է, եթե ոչ արդյունք հանց այդ սխալ հայացքիր Դեռ Դարվինի կենդանության օրով գոյության կոպիտ կոփվն ու բնական ընտրության սկզբունքը հասարակական կյանք տեղափոխողը, եղել է նույն ինքը «դարվինիզմի առաքյալ» Հեկկելը. նրա կարծիքով ձգտումը սոցիալական



Դարգինը զբոսնքի ժամանակ

Հավասարության՝ հավասարազոր է «բարբարոսություն վերագարձնելու ձգտումին»։ Բայ Սպենսերի՝ հասարակական կյանքում դոցության կովի ոչնչացումը առաջ կրերի «մտավոր և ֆիզիկական անկում»։ Իսկ վերջին ժամանակների հոչակավոր բիոլոգներից ու խոշորագույն սոցիալ դարվինիստներից (Կոնկլին, Բատ, Պլատե և այլն) մինչև մեր օրերի ուսմաները այն հայացքին են, որ մարդկության գլխին եկող ընդհանուր ու մեծագույն թշվառությունները, աշխարհասասան պատերազմներն ու տնտեսական խոշոր ճնշաժամերը, համաձարակ հիվանդություններն ու սովոր և այնուղղակի լավագույն միջոցներ են մարդկանց միջև «բնական ընտրություն» կատարելու՝ ուժեղներին ու դիմացկուններին պահպանելու, իսկ թույլերին ու տկարներին ոչնչացնելու ուղղությամբ։

Դարվինի ակնհայտ վրիպումներից է և՛ նրա հաճախակի կը բենուամը կայրնիցյան այն հայտնի ասացվածքի, թե «բնությունը թրոփշներ չի գործում», սրանով շեշտելով էվոլյուցիոն պրոցեսի շարահարությունը, նրա անընդհատությունը, մինչդեռ նրա ամրող տեսությունը հիմնված է հենց անընդհատ այդ պրոցեսի ընդհատումների վրա, «բոլիչների» վրա. և այն սրամիտ ու սրատես շեքըսին է, մեկն առաջիններից, որ անմիջապես դիտողություն է արել Դարվինին, թե «նա իր համար անհարկավոր դժվարություն է ստեղծել առանց ալիսալության ընդունելով, թե բնությունը նորից ներ չի գործում»։ Երբ փոփոխությունների կուտակմամբ նոր տեսակներ են ձևավորվում — առանձնացնում, իսկ միջանկյալ ձևերը մնունում են, ցուցում են արել մարքարդմի կլասիկները, չե՞ որ դա հենց անբնիատի մշտական բնդիատումն է. իսկ դա արդեն բոիշ է։ Այս այն սխալներից ու վրիպումներից, որոնց հանգիստում ենք Դարվինի ուսմունքի մեջ։

10. Դարվինն իր մասին, Վերն առաջ բերած գնահատականների ու կարծիքների կապակցությամբ շատ հետաքրքրական կլիներ անշուշտ տալ այստեղ և՛ հենց իրեն՝ Դարվինի կարծիքներն ու գնահատականներն իր մասին, տեսնել, թե նա ինքն իրեն ու իր գործը ի՞նչպես է ներկայացնում իր բնթերցողներին, ծանոթանալ նրա, այսպես ասած, ինքնառակումներին, նրա ինքնաքննադատությանը։

«Ամեն անգամ...երբ ինձ արհամարհանքով բննադատում էին կամ շափից դուրս գովում,... լավագույն հանգստությունս ես զբաւ-

նում էի այն բանի մեջ, ինչպես ես այդ զգացել եմ հարյուրավոր անդամներ, որ ասում էի ինքս ինձ. «Ես աշխատել եմ, որքան որ կալուղացել եմ» համառոքն ու կանոնավոր կերպով, իսկ դրանից ավելին պահանջել մարզուց՝ շի՛ կարելի: Հիշում եմ, որ... դեռ Հրո հրերում գտնված ժամանակ ես եկել եմ այն եղրակացության... որ ես ավելի լավ չեմ կարող իմ կյանքը տնօրինել, քան այն նվիրելով բնագիտության բնագավառից նոր փաստեր ձեռք բերելունիւն այդ կատարել եմ իմ բնդունակությունների շափով. բննադատները կարող են ասել ինչ ուզում են, սրանում նրանք իմ կարծիքը փոխել չեն կարող»:

«Ես շունիմ ո՞չ ըմբռնման արագություն, ո՞չ սրամտություն, որով աշբի են բնկնում շատ մարդիկ, ինչպես օրինակ Հեքսլին: Այսպատճառով էլ ես շատ վատ քննադատ եմ: Գիրք կամ հետազոտություն սովորաբար ինձ հիացնում են առաջին ընթերցումից հետո. և միայն երկարատև կշռադատումից հետո երեան եմ հանում նրանց թույլ կողմերը: Ինձ մոտ շատ սահմանափակ է երկար ու միանդամայն վերացական մտքերի թելին հետեւելու բնդունակությունը, ուստի և ես երբեք չեմ կարող հաջողությամբ զբաղվել ո՞չ մետաֆիզիկայով, ոչ էլ մաթեմատիկայով: Հիշողությունն շատ լայն-բնդարձակ է, բայց փոքր ինչ մշուշային:... Որոշ ուղղությամբ հիշողությունն այնքան թույլ է, որ ես երբեք ի վիճակի չեմ եղել նրանում պահել որեւէ թվական կամ ոտանավորներ մի քանի օրից ավելի»:

«Թմ բննագատներից մի քանիսն ասել են իմ մասին. «Նա անկանգած հիանալի դիտող է, բայց գատել չկիտե»: Զեմ կարծում, որ սա ճիշտ լիներ, որովհետև «Տեսակների ծագումը» սկզբից մինչև վերջ — մի երկար արգումենտ է և նա մենակ մի՛ խելոք մարզուի համոզել: Ոչ որ չեր կարող գրել այդ գիրքը՝ շոնենալով դատողական բնդունակություն: Ես բավականաշափ ճարտարամտությունը ասուղ մտածողություն ունիմ կամ այն շափի դատողություն, որ շափի իր գործը հաջող տանող յուրաքանչյուր բժիշկ կամ փաստաբան, բայց դրանից ո՞չ ավելի»:

«Բայց, թվում է, կարելի է իմ արժանիքներից համարել այն, որ ես գերազանցում եմ սովորական միջակ մարդուց այնպիսի բան տեսնելու բնդունակությամբ, որ խոսափում է բնդանուր ուշադրությունից, և հանգամանորեն դիտելու հմտությամբ: Փաստեր

Հավաքելու և դիտելու մեջ ունեցած իմ ջանասիրությունը, թվում է, շեր կարող ավելի լինել, քան իրոք կա: Բայց ինչն ավելի կարևոր է՝ ինձ բնագիտության է զրգել ջերմ և միշտ անփոփոխ սերմ»:

«Զուտ այս սերը սակայն զգալապես խրախուսվում էր այն փառասիրությամբ, որ ձգտում ուներ արժանանալու ընկեր նատուրալիստների հարգանքին: Ամենավաղ պատանեկությունից ես բուռն ցանկություն էի զգում հասկանալ կամ բացատրել այն, ինչ դիտում էի, այսինքն՝ փաստերը ենթարկել ընդհանուր օրենքներին: Այս բոլոր պատճառների խմբակցությունը ինձ համբերություն էր ներշնչում տարիներ շարունակ մտքումս կշռադատել կամ որոշակ շլոծված այս կամ այն հարցը: Որքան դատել կարող եմ՝ ընդհանրապես ես հակված չեմ կուրորեն ենթարկվելու կողմնակի ազդեցության:... Մյուս կողմից ես շատ սկեպտիկ չեմ. ուղեղի այսպիսի կերտվածքը, իմ կարծիքով, վնասում է գիտության նվաճումներին: Բավականաշափ սկեպտիցիզմը օգտակար է գիտունի համար, քանի որ ազատում է նրան ժամանակի կորստից»....

«Իմ սովորությունները խիստ մեթոդիկ են և սա ինձ քիչ օգուտ չի տվել իմ միանգամայն բացառիկ տիպի զրազմունքների ժամանակ: Վերջապես ես լիառատ ազատ ժամանակ եմ ունեցել՝ ստիպված լինելով օրական հացս վաստակելու: Մինչև անգամ վատառողջությունս... ազատել է ինձ ցրված կյանքից և աշխարհիկ գվարճանքների տրվելիք ժամանակի կորուստից»:


«Այսպիսով, կյանքում ունեցած իմ հաջողությունները որպես գիտության մարդու, ինչ շափերի էլ նրանք լինեն, կախված էին, որչափ ես դատել կարող եմ, մտավոր բարդ և բազմազան հատկություններից: Այդ հատկություններից, անկառած, ամենակարևորներն էին՝ գիտության սերը, անսահման համբերությունը..., ջանասիրությունը փաստեր դիտելու և հավաքելու ժամանակ և բավականաշափ հնարամտություն և առողջ դատողություն: Զարմանքի արժանի է, որ իմ ունեցած այսպիսի շափակոր քննունակություններով ես կարողացա որոշ շափով ազել գիտության մարդկանց համոզմունքների վրա՝ մի քանի կարևոր հարցերի նկատմամբ»:

Այսքանով բավականանում ենք:

Ընթերցողն անշուշտ նկատում է, որ Դարմինի «ինքնաքննա-

դատությունից» ուղղամտություն, անկեղծություն, ազնվություն և
ծայր աստիճանի համեստություն է փայլում:

11. Պայմար Դարվինի ուսմունքի համար. Գիտության մեջ
ամբողջ հեղաշրջում տռաջացրած ուսմունքը, բնականաբար, չէր
կարող «անարյուն» անցնել. միմյանց դեմ «բանակներ» են կանգ-
նում. բորբոքվում է հուժկու և դաժան պայքար: Մի կողմում այդ



Թոմաս Հեքուի

ուսմունքի շերմ պաշտպաններն են, համոզված կողմնակիցները,
մյուս կողմում՝ խիստ քննադատները, կատաղի հակառակորդներն
ու թշնամիները: Վերջիններս, այդ նորը մերժողները նին գիտու-
թյան ներկայացուցիչներն են, ինչպես և կրոնի ու եկեղեցու հե-
տեղները, հոգևորականությունը: Առաջինները «գրիշ-սուր» են
բարձրացնում՝ նորի հաղթանակն ու նրա ազատ երթն ապահովելու
համար: Դրանցից հատկապես երեքն են հիշատակության արժա-

նի: Բուն Անգլիայում Հեքսլին է, Հետագայում «սատանայի ավետարանի ագենտ», «Դարվինի բուլղող» կոչումներն ստացած, որ «սրում է իր ճանկերն ու կտուցը» և Հրապարակ նետփում «կուրտացած աշքերը բաց անող ուսմունքը» պաշտպանելու այնպիսի հոգանդով ու թափով, որ Դարվինի իրեն զարմանքն ու Հիացմունքն է շարժում: Խուզնը Գերմանիայում երիտասարդ էնտուզիատ Հեկիելն է անում՝ պարզելով պայքարի մի դրոշակ այնպիսի ծալվալով ու ոգեսրությամբ, որ Դարվինն ինքը Հարկ է Համարում նրա «Փեշը քաշելու»: Ծուսասաւանում այդ միենույն գերի մեջ է սքանչելին Տիմիրյազել՝ ուսանողական նստարանից սկսած մինչև պրոֆեսուրական ամբիոն ու մինչև կյանքի վերջ— այնպիսի գրչով ու եղալով, որ այսօր էլ Հիացմունք է առաջացնում ընթերցողի մէջ, իսկ ժամանակին երախտագիտության արժանացել Դարվինի կողմից: Ահա գլխավորապես այս ու նման մարտիկների ծավալած եռանդուն պայքարի շնորհը է, որ Դարվինի ուսմունքը իր ստեղծողի կենդանության օրոք իսկ Հաղթանակ է տանում: «Դուք Հազվագյուտ երշանկություն ունեք, գրում է Հեքսլին Դարվինին 1868 թ., Զեր կենդանության օրով տեսնելու Զեր գաղափարների Հաղթանակը»:

12. Դարվինի ուսմունքի պահպանումն ու զարգացումը Սովետների երկրում. Սակայն ինքնին պարզ ու Հասկանալի է, որ Դարվինի ունվոլուցիոն ուսմունքը աշխարհիս ամենամեծ ունվոլուցիան կատարած երկրում, Սովետների երկրում, կարող էր լավագույն եղանակով զնահատվել ու զարգացվել: Մինչև անգամ մեր օրերի Ամերիկայում Դարվինիզմը հալածանքի է հնիթակա ու տարիներ առաջ «կապկալին» հայտնի պրոցեսը տեղի ունեցավ, իսկ «Գերմանիայում նույն ուսմունքը նախ սոցիալ գարվինիզմի և ապա ալլանդակ ֆաշիզմի նույնքան ալլանդակ ուսացական «տեսությանը» վերածվեց և այն էլ, որ առավել վրգովեցուցիչն է, այն հավակնությամբ, թե ֆաշիզմը, բռնության ու կոպիտ ուժի այդ պաշտամունք «ուսմունքը», Դարվինիզմի արամաբանական զարգացումը, նրա շարունակությունն է: Ահա այստեղ մի նմուշ այն մասին, թե ինչպիս են հասկանում ֆաշիստ «դարվինիստները» սելեկցիայի, ընտրույթան սկզբունքը: Համաշխարհային այս պատերազմի նախօրեին գերմանա-ֆաշիստական մի ժուռնալ* — մի

* Archiv für Biologie und Rassenkunde. 1938.



Եսնոտ Հեկիկելը (երիտասարդ հասակում, կանգնածը) իր ասիս-
տենտ Միկուլիս Մակլայի հետ (հետագայի հոչակավոր ճանա-
պարհորդը) Կանաբյան կղզիներում

Հոդված ունի «Այն օգուտի մասին, որ բերում էն օդային ոմբակո-
ծությունները ռասալական սելեկցիայի և սոցիալական առողջա-
պահության տեսակետից» վերնագիրը կրող, որի մեջ սեռվ սպի-
տակի վրա տպապրված է.

«Օդային ոմբակոծություններից ամենից շատ տուժում էն քա-
ղաքի ամենից խիտ բնակված շրջանները: Քանի որ այդ ույսու-
ներն ու թաղերը բնակված են աղքատ, անապահով մարդկանցով,
ուստի հասարակուրյունը օդային ոմբակոծուրյունների օգնու-
րյամբ ազատվում է այդ մարդկանցից... Բացի դրանից մի տոն-
նա և ավելի կշիռ ունեցող ծանր ոռութերի պայրյունները ոչ միայն
մաս են սփռում, այլև անխուսափելիութեն առաջ են բերում խելա-
զարուրյունների բազմաթիվ դեպքեր: Քայլքայլած ներվագին սիս-
տեմ ունեցող մարդիկ չեն կարող տանել այդ կարգի ցնցումներ: Ռստի
օդային ոմբակոծուրյունները կօգնեն մեզ հայտնաբերել
ներվաստենիկներին և մեկուսացնել նրանց հասարակուրյան
կյանքից: Եթե հիվանդուրյունը բացված կլինի, կմնա միայն ստե-
րիլիզացիայի ենթարկել նույն կրողին. իսկ հենց դրանով ապահով-
ված կլինի ռասայական ընտրուրյունը» (բոլոր ընդգծումները
մերն են՝ Ա. Տ.-Պ.):

Այս հոդվածի հրատարակումից ուղիղ մի դար առաջ սելեկ-
ցիոնիզմի հեղինակ Դարվինը, դարձյալ սեռվ սպիտակի վրա, գրած
ունի ամերիկական նեգրերի ստրկուրյան մասին. ահա այն.

«Փառք աստծու, որ ես այլևս չեմ լինի այնպիսի երկրում, որ-
տեղ գոյություն ունի ստրկություն: Դեռ հիմա էլ հեռվից ականջիս
հասնող ամեն մի ճիշ հիվանդագին կենդանությամբ հիշողությա-
նըս մեջ հարություն է տալիս այն զգացումը, որ ես մի անդամ
ապրել եմ մի տան մեջ Պերնամբուկի մոտ, որտեղ ես լսեցի ալ-
կաուր հառաշանք: Ես կռահում էի, որ այդտեղ խեղճ ստրուկի են
խոշտանգում և ես ինձ զգում էի անօգնական, ինչպես մի երեխա,
որ չի կարող ոչինչ առարկել: Ես ենթադրում էի, որ այդ հառա-
շանքը դուրս է գալիս մի ստրուկի կրծքից, որին ենթարկում էին
տանջանքի և իրոք ուրիշ անգամ, նման պայմաններում, ինձ այդ
բանը հաստատեցին»:

Հակադրությունն այս երկու մեջբերումների՝ միանգամայն
պարզ ու հասկանալի է. այնտեղ հրեշը, մարդ-գաղանն է խոսում,
այստեղ հասարակական մարդը, մորալ ու իրավունք ունեցող և



Տիմուրյան

Ճանաշող մարզը: Իսկ թե մարդախոշոշ այն հայացքները միայն՝ հոգվածագրինը չեն, այլ բոլոր ֆաշիստներինը և որդա անհատաւ կան բնույթը չունի, այլ փելիստվայական ամրուց «սխտեմ» է՝ որ հայտնի գարձավ ողջ աղատատենչ մարդկությանը:

Մի կողմ թողած Գերմանիան, եթե մինչև անգամ՝ Ամերիկայում էլ Գարվինիզմը չի հանդուրժվում, նշանակում է իրոք միայն Սովետների երկիրն ու սովետական դիտնականներն են, որ հանդիսանում են Դարվինի իսկական ժառանգորդները, նրա գործը պահպանողները, շարտնակողներն ու զարգացնողները:

Եթե Միջուրինը այն սկզբունքին էր, թե «Մենք չենք կարող ողորմություն սպասել բնությունից, հպատակեցնել նրան մեզ՝ այչ է մեր խնդիրը»— նշականում է նա իսկական գարվինիստ է, բնությունը վերափոխող դիտնական: Աշխարհագրորեն միմյանցից հեռու գտնվող բույսերի խաշածեման իր մեթոդով՝ Միջուրինը 300-ից ավելի նոր սորտեր է առաջացրել, «որոնք լուրջ հիմունք են հանդիսանում պտղային և հատապտղային ճյուղի սոցիալիստական ուեկտնատրուկցիայի համար Սովետական Միության ո՛չ միայն եվրոպական մասում, այլև ասիական մասում, Կովկասի (Դաղստան, Հայաստան) բարձր լեռնային շրջաններում»: Ահա այսպիս Միջուրինի կյանքի ամբողջ գործը, նրա ստեղծած բազմաթիվ նոր սորտերն ապացուց են մի կողմից Գարվինի ուսմունքի ճշմարտության, մյուս կողմից այդ ուսմունքի շարտնակության՝ զարգացման մտքով:

Եթե ակադ. Լիսենկոն հետամուռ է բույսերի զարգացման օրինագությունները երևան հանելուն, եթե նա զարգացման ստագիական տեսությունն է տվել, զարձյալ նպատակն է զեկավարել նրանց զարգացումը՝ մարդուն ձեռնառ ուղղությամբ, այս է ասում նրա յարովիգացիան: Նշանակում է՝ ակադ. Լիսենկոն և Դարվինի գծած ճանապարհով է գնում, նա էլ իսկական գարվինիստ է:

Դարվինի ուսմունքով են զեկավարվում, նրա ուսմունքով են տողորված ու նրա ուսմունքն են զարգացնում նաև «Կենդանիների Հիբրիդացիայի և Ակլիմատիվացիայի Խնստիտուտի» և «Ինդանաբուժական Համամիութենական Խնստիտուտի» աշխատակիցները, և ինչ Միջուրինն է արել բույսերի վերաբերմամբ, նույն աշխատում են անել ա՞ս և այս ինստիտուտներում աշխատող դիտ-



Übersicht

ռասմունքի իսկական ժառանգորդներն ու պահապաններն են, այն, որ նրանք մի կողմից այդ տամունքի թերություններն ու սխալները համարձակորեն ու ազնվորին վեր հանողները, ուղղողներն են, իսկ մյուս կողմից այդ մեծ ուսմունքը զարգացնողները, այն՝ նաև աշխատանքի գործոն գարձնողները: Իսկ այս նշանակում է՝ սովետական զիտնականների, աշխատանքների արդյունքներն ու նրանց մեթոդները միայն զիտնականների իրենց բաժինը չեն մնացել, նրանց ներ շրջանակներում պարփակվել, հապա գուրս են եկել նրանց լարուրատորիաններից ու կարբինետներից և բափանցել պրակտիկ կյանքի մեջ, թափանցել մեր կոլլուգներն ու սովորողները: Մեր այսօրվա կոլլուգային ու սովորողային դաշտերի ու այգիների մասսայական աշխատողները, մեր սոցիալիստական այդ շինարարները ներքծված են իրենց մեծ երկրի զիտնականների զարգացմաններով ու մեթոդներով, զնում են նրանց հետեւյց, նրանց գծած ուղղությունը վերափոխելու բնույթյունը՝ մարդու համար առավել շահագլություն ուղղություններով: Եշանակում է այս վերջիններս էլ Դարվինի մեծ ուսմունքը եթի ո՛չ զարգացնողներից, այն՝ մի նոր աստիճանի բարձրացնողներից են, ապա առնվազն այդպիսին անողների լավագույն աշակից-զինակիցներն են, նրանց զաղափարները կյանքում իրականացնող-մարմագացնողներն են:



ԲՈՎԱՆԴԱԿԱՒԹՅՈՒՆ

հջ

Դարպինի դարոցական տարիները	5
Դարպինն էպինբուրգում	6
Դարպինը Քեմբրիչում	9
Դարպինի շուրջներկրյա ճանապարհորդությունը	13
Դարպինը Դաստիամ	18
Դարպինը ուսմունքի գիտական և սոցիալ-տնտեսական նախադրյալները	20
Դարպինի ուսմունքի ուզն ու ծառծը	23
Դարպինի ուսմունքի նշանակությունը և նրա գնահատականը մարքսիզմի կամաց կողմից	28
Դարպինի սխալները, վրիպումները	31
Դարպինն իր մասին	33
Պայքար Դարպինի ուսմունքի համար	37
Դարպինի ուսմունքի պահպանումն ու զարգացումը Սովորությունների երկրությունում	38

Տեխ. խմբագիր՝ Մ. ԿԱՓԻՅԱՆՑԱՆ
Ծրբագրիչ՝ Ա. ԱՐԶԱՔԵՆՅԱՆ

Հանձնված է տրտագր. 2/VII 1947 թ. ստորագրված է տպագր. 28/VII 1947 թ.
Վ. վ. 02709. պատվ. 556. հրատ. № 413, տպագրութան 3 մամուլ,
մեկ մամուլում 38400 տպ. նիշ, հեղինակ. 2½ մամուլ

Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի տպարան, Երևան, Աբովյան 104

ԳՐԱՎԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱՅՑ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- Պ. Համբարձումյան.—Տիեզերքի կառուցվածքը
Ե. Տեր Մինասյան.—Ռոկհղարի հայ գրականությունը
Մ. Զայլախյանն.—Կ. Ա. Տիմիրյազելը որպես դարվինիզմի մարտիկ
Սալոմե Արեցյան.—Ռուս գրողները Հայաստանի սասին
Գուրգեն Սևիակ—Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը
Վ. Հ. Գուլբանյան.—Ռուս մեծ զարվինիստ Տիմիրյազելը
Մովսիսյան Աննան. Ն. Յա. Մառի կյանքը և ստեղծագործությունը
Գ. Աղաջանյան, Ա., Արարատյան.—Մոլախոտերի բիոլոգիան և
պայքարը նրանց դիմ
Ա. Լ. Թախտաջյան—Հայաստանի բուսական աշխարհը
Գ. Աղաջանյան, Ա. Զիրյան.—Շաբարի ճակնդեղի մշակությունը
Ա. Կարազյանյան.—Հայաստանի երկրագործությունը ստալինյան
չորրորդ հնգամյակում
Ա. Հ. Զիրյան.—Վասիլիի Վասիլեիչ Դոկուչաևը և գիտությունը հողի
մասին
Հ. Գ. Բատիկյան.—Մարդու ծագումը

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010718

ԳԻՒՐ 3 Ռ. 304.

A —
15974